

«Գլաճոր ուվկ» ՓԲԸ
«Բիզնես վարկերի տրամադրման» կարգի

ԲԻԶՆԵՍ ՎԱՐԿԵՐԻ ՏՐԱՍԱԴՐՄԱՆ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ «ԳԼԱՉՈՐ ՈՒՎԿ»
ՓԲԸ ՆԵՐԿԱՅԱՅՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՐ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

- ✓ դիմում-հայտ,
- ✓ մասնակիցների կամ բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշման արձանագրություն,
- ✓ հիմնադիր փաստաթուղթը (կանոնադրություն)՝ հետագա բոլոր փոփոխություններով և լրացումներով հանդերձ,
- ✓ Պետական ռեգիստրի գրանցման վկայական (իր Ներդիրներով, ներառյալ ընկերության տնօրենի վերաբերյալ տեղեկության ներդիրը),
- ✓ տվյալ ոլորտում աշխատելու համար անհրաժեշտ լիցենզիաները, գրանցման փաստաթղթերը, հարկային կողը և այլն,
- ✓ տեղեկանք Պետ. ռեգիստրից կանոնադրության փոփոխության և մասնակիցների վերաբերյալ, մասնակիցների բաժնեմասի սեփ. վկայագրեր, ինչպես նաև Բաց Բաժնետիրական Ընկերության համար՝ Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից տրված, Փակ Բաժնետիրական Ընկերության համար՝ բաժնետերերի ռեստր վարողի կողմից տրված տեղեկանք **/ներկայացվում են վարկի կամ երաշխիքի տրամադրման դրական որոշման դեպքում/**,
- ✓ ղեկավարների վերաբերյալ տեղեկություններ (անձնագրային տվյալները, սոց. քարտ, նշանակման /ընտրության/ մասին հրաման /որոշում/),
- ✓ ֆինանսական հաշվետվությունները վերջին երկու հաշվետու ժամանակաշրջանների համար /հաստատված Պետական Եկամուտների Կոմիտեի կողմից/, նախընտրելի է նաև վերջին ստուգման ակտը,
- ✓ աուդիտորական կազմակերպության եզրակացությունը /առկայության դեպքում/,
- ✓ տեղեկանքներ պարտքերի առկայության մասին (հարկային մարմիններից, սպասարկող բանկերից և դատարանից՝ անվճարումնակության և դատական գործընթացի վերաբերյալ),
- ✓ գործարար ծրագիր կամ տեխնիկա-տնտեսական հիմնավորում,
- ✓ գործող պայմանագրեր և համաձայնագրեր /իրացման, մատակարարման, վարձակալության և այլն/,
- ✓ հաշիվ ֆակտուրաներ, ակտեր, վճարային հանձնարարագրեր կամ պահանջագրեր և այլն,
- ✓ Հաճախորդի դեբիտորների և կրեդիտորների ցուցակը, գումարների չափերը, ձևավորման և վերադարձման ժամկետները,
- ✓ Հաճախորդի այլ Բանկերում հաշիվների առկայության դեպքում՝ վերջին երկու ամսվա բանկային հաշիվների շարժի քաղվածքներ,

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՐԱՎԱԴՐՄԱՆ ԴԵՊՋՈՒՄ

- ✓ սեփականության վկայական,
- ✓ սեփականության իրավունքի հիմքը,
- ✓ տեղեկանք «ՀՀ ԿԱ անշարժ գույքի պետական միասնական կադաստր»-ի տարածքային ստորաբաժանումից, գրավադրվող գույքի սահմանափակումների վերաբերյալ, **/ներկայացվում է վարկի կամ երաշխիքի տրամադրման դրական որոշման դեպքում/**,
- ✓ Իրավասու մարմնի որոշումը գույքը գրավադրելու մասին,
- ✓ Վարկային կազմակերպության պահանջի դեպքում համապատասխան լիցենզիա ունեցող անձի կողմից կազմված գնահատման ակտ, այն դեպքում, երբ գրավադրվող գույքը բնակարան է, նաև օգտագործման նպատակն է՝ բնակելի, անհրաժեշտ ձև 3՝ անձնագրային բաժնից,

ԱՅԼ ԳՈՒՅՔԻ ԳՐԱՎԱԴՐՄԱՆ ԴԵՊՋՈՒՄ

- ✓ իրավասու մարմնի որոշումը գույքը գրավադրելու մասին,
- ✓ գույքի ցանկը, նշելով չափի միավորը, քանակը, հաշվեկշռային արժեքը, գնահատված արժեքը, և ձեռք բերման փաստաթղթերը,
- ✓ ավտոմեքենայի դեպքում տեխնիկական անձնագիրը,
- ✓ ավտոմեքենայի դեպքում տեղեկանք կալանքի կամ արգելանքի մասին ՊԱՏ վարչությունից,
- ✓ Վարկային կազմակերպության պահանջի դեպքում համապատասխան լիցենզիա ունեցող անձի կողմից կազմված գնահատման ակտ,

ԱՅԼ ԼՐԱՅՈՒՑԻՉ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ, ՈՐՈՆՑ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՈՇՈՒՄ Է ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ

Վարկային կազմակերպությունը կարող է պահանջել ապահովագրել գրավի առարկան կորստյան, փչացման ոչնչացման և վնասվածքի ռիսկերից, ներկայացնել դրա հետ կապված անհրաժեշտ փաստաթղթերը:

Հաճախորդը պետք է ներկայացնի նշված փաստաթղթերի բնօրինակները կամ սահմանված կարգով վավերացված պատճենները: Հաշվի առնելով հաճախորդի ռիսկի ընդունելի մակարդակը, Վարկային կազմակերպությունը կարող է պահանջել ոչ բոլոր վերոնշյալ փաստաթղթերը: